ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

24 մարտի 2012թ. թիվ 108

ԳՈՀԱՐԻԿ ԱՎԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության պետական տեսչության պետի 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 76-Ա կարգադրության համաձայն ս/թ դեկտեմբերի 7-ից 26-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում իրականացված ուսումնասիրության հիման վրա կազմված տեղեկանքը և Գ.Ավետյանի բացատրությունը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները չկատարելու պատճառով «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու N 12 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Գոհարիկ Ավետյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. մարտի 24
ք.Վանաձոր